ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1965 Общественные науки

Գ. Խ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ. Թ. Ա. II ԴԱՐՈՒՄ

(Հելլենիստական շրջանի պատմության լուսաբանման համար Մ. Խորենացու «Հայոց պատմության» տվյալների սիստեմատիկ օգտագործման փորձ)

Հելլենիստական Արևելքի պատմության մեջ մ. թ. ա. III և II դարերի ելքը շրջադարձային կետ է, որը նշանավորվում է կարևորագույն ու հետևանքներով հարուստ մի իրողությամբ՝ Առաջավոր Ասիայի պատմաբեմ է դուրս գալիս մի նոր հզոր ուժ՝ Հռոմեական հանրապետությունը։ Հռոմը՝ անցյալում քաղաք-պետությունը, հետզհետե գրավել էր ամբողջ Ապենինյան թերակղզին, մոտակա կղզիները՝ Սիցիլիան, Կորսիկան, Սարդինիան, ջախջախել Արևմտյան Միջերկրականում իր գլխավոր ախոյանը հանդիսացող Կարթագենի պետությունը և տիրացել Միջերկրականի ափերի մեծ մասին։ Այժմ նրա ուշադրության կենտրոնում էր գտնվում Բալկանյան թերակղզին՝ հունական քաղաքները և հելլենիստական Մակեդոնիան։ Սակայն դեպի Բալկաններն էին ձգտում նաև Ասիայի տիրակալները՝ Սելևկյանները։ Կողմերը ուշիուշով հետևում էին միմյանց քայլերին։ Ընդհարումը տեղի ունեցավ II դարի 90-ական թվականների վերջին և ավարտվեց Սելևկյան Անտիոքոս Գ-ի պարտությամբ։ 191 թ. նրա զորաբանակը ջարդվեց Հունաստանի տերիտորիայի վրա՝ Թերմոպիլեում, որից հետո հռոմեական զորքերը անարգել անցան Սևծովյան նեղուցներով և առաջին անգամ ոտք դրին Ասիայի հողը։ Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մագնեսիա քաղաքի մոտ 190 թ. (Liv., XXXVII, 38 և հետ., App., Syr., 31 և հետ.)։ Հռոմեական զորքը կրկնակի անգամ փոքր էր Անտիոքոսի զորքից, բայց նա հաղթեց և այդ հաղթանակը ծանրագույն հետևանքներ ունեցավ Սելևկյանների պետության համար։ Ապամեայում 188 թ. կնքված պայմանագրի համաձայն նրանք զրկվեցին գրեթե ամբողջ Փոքր Ասիայից, պարտավորվեցին վճարել հսկայական ռազմատուգանք և այլ զիջումներ արեցին[1]։ Բացի այդ, թուլացան Սելևկյանների տերության ծայրամասային երկրները զսպող կապերը։ Հատկապես Հայաստանը անջատվեց նրանից և վերստին անկախություն ձեռք բերեց։ Այսպիսով, Հռոմի առաջին հաջողությունը Ասիայի հողի վրա, անկախ իր հետագա հետևանքներից, բարենպաստ եղավ Հայաստանի համար։

Հայաստանը III դարի ընթացքում, թեև մեծ մասամբ ինքնուրույն թագավորություն է կազմել[2], բայց և այնպես գտնվել է հարավային հզոր հարևանի ուժեղ ազդեցության ոլորտում և քաղաքական ու տերիտորիալ զարգացման հնարավորությունների առումով եղել է անբարենպաստ պայմաններում։ Սա-

---

[1] H. Bengtson, Griechische Geschichte von den Anfangen bis in die romische Kaiserzeit, München, 1960, էջ 470 և հետ.։

[2] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, էջ 100 և հետ.։

կայն նույն այդ ազդեցությունը հելլենիստական դարաշրջանի հենց սկզբից նշանակալից դրական դեր է խաղացել երկրի ներքին սոցիալ-տնտեսական կյանքի ասպարեզում, գարկ տալով նրա զարդացմանը ստրկատիրական հասարակարգի ուղիներով։ Հայաստանը ներդրավվել է Առաջավոր Ասիայի տրնտեսական բուռն առաջընթացի հորձանքը։

Այս երկու հակասական և իրերամերժ հանգամանքները՝ տնտեսական զարդացումը մի կողմից և քաղաքական կաշկանդվածությունը՝ մյուս կողմից, չէին կարող երկար ժամանակ կողք կողքի գոյություն ունենալ. արտաքին պատնեշները պետք է տեղի տային ներքին աճի ու հզորացման առջև, մանավանդ որ գոյություն ուներ ու հասունացել էր դրա կարևորագույն մի նախապայմանն ու գործոնը։

Այդ նախապայմանը ստեղծվել էր հայ ժողովրդի կազմավորման ընթացքում, որ մոտենում էր իր ավարտին։ Հայկական բարձրավանդակի ծայրամասերը արդեն մեծ մասամբ ներգրավվել էին հայկական էթնոսի և հայերեն լեզվի ոլորտը, բայց տակավին շարունակում էին գտնվել պետական այլ միավորումների ընդերքում։ Արևմտյան շրջաններում, ճիշտ է, ստեղծվել էին մանր ինքնուրույն պետական կազմավորումներ, ինչպիսիք էին՝ Փոքր Հայքը և Ծոփքը, բայց դրանցից յուրաքանչյուրն ընդգրկում էր հայկական էթնոսի համեմատաբար փոքր մասը։ Այս պայմաններում բարձրավանդակի կենտրոնական շրջանները գրավող Երվանդյանների թագավորությունը պետք է դառնար այն կորիզը, որից աճելու էր միացյալ հայկական պետությունը։

Հայ ժողովրդի պատմական կյանքի այս վճռական պահին մեծ դեր էր վիճակված Արտաշես Ա-ին (189— մոտ. 160 թթ. մ. թ. ա.), որի մասին անտիկ պատմագրության պահպանած տեղեկությունները թեև սակավաթիվ են ու մանրամասնություններից զուրկ, բայց և այնպես թույլ են տալիս դատելու նրա գործունեության կարևորագույն կողմերի մասին։ Հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Արտաշեսի մասին նաև հայ պատմական ավանդությունը, որը մեզ հասել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» միջոցով։ Վերջապես Արտաշեսից ունենք նաև վավերագրեր, իսկ վավերագրերը, ինչպես հայտնի է, բացառիկ հազվագյուտ երևույթ են հայ ժողովրդի հին պատմության աղբյուրների շարքում։

Ստրաբոնի հաղորդումից գիտենք, որ Արտաշեսը (Արտաքսիաս) նախապես եղել է Հայաստանի՝ Սելևկյանների կողմից նշանակված կառավարիչը (ստրատեգոս), և ապա գրավել է գահը, տապալելով նախորդ դինաստիայի վերջին ներկայացուցիչ՝ Երվանդին (Օրոնտես) ու դարձել նոր դինաստիայի հիմնադիր (Strab., XI, 14, 15)։

Պատմական խոշոր դեմքերի շուրջը միշտ ավանդություններ են հյուսվում, որոնք հաճախ արտացոլում են իրական դեպքերը։ Ավանդությունների մի որոշակի տարատեսակ գոյություն ունի հատկապես նոր դինաստիաների հիմնադիրների ծագման, մանկական տարիների ու դահակալման մասին։ Երեթե բոլոր նման ավանդությունների համար ընդհանուր է այն, որ հերոսը նախորդ թագավորի ազգականն է, սովորաբար՝ իգական գծով, որ թագավորը ինչ-ինչ պատճառներով, մեծ մասամբ իշխանությունից զրկվելու երկյուղից դրդված, հետապնդում է մանուկ հերոսին, փորձում սպանել նրան։ Սա հրաշքով ազատվում է, տարիներ է անցկացնում անհայտության մեջ՝ մի հասարակ մարդու՝ հովվի կամ հողագործի ընտանիքում, ապա վերադառնալով տիրանում

գահին ու պատժում իր հետապնդողին։ Նման ավանդություններ, որոնք ընդգրկում են կամ ամբողջ այս սյուժեն կամ նրա մի մասը, գոյություն ունեն ակկադյան դինաստիայի հիմնադիր Սարգոնի[3], Ռոմուլոսի (Plut., Rom., 3 և հետ.), Կյուրոս Մեծի (Her., I, 108 և հետ.) և շատ ուրիշների մասին։ Ահա այդպիսի մի ավանդություն էլ հյուսվել է Արտաշեսի շուրջը ու մեզ հասել Խորենացու «Հայոց պատմության» էջերում։ Երվանդ թագավորը հետապնդում է մանուկ Արտաշեսին, սա փախչում, փրկվում է նրա ձեռքից, ապաստանում հովիվների մոտ։ Տարիներ անց Արտաշեսը տիրանում է հայոց գահին, իսկ Երվանդը ընկնում է պայքարում (Մ. Խոր., II, 37 և հետ.)։

Ի տարբերություն Ստրաբոնի, Խորենացու մոտ Երվանդը ներկայանում է ոչ թե որպես օրինական թագավոր, այլ որպես բռնակալ-թագավոր, թագավորական տոհմին պատկանող կանանցից մեկի ապօրինի զավակ, իսկ Արտաշեսը՝ որպես գահից զրկված թագաժառանգ։ Այսպիսի երանգավորումը, հավանաբար, Արտաշիսյան դինաստիայի կողմից հետագայում առաջադրված պաշտոնական տեսակետի արտացոլումը լինելով հանդերձ, նաև պատմական որոշ հիմք ունի և ճիշտ հասկացվելու դեպքում ոչ թե հակասում է Ստրաբոնի տվյալներին, այլ լրացնում դրանք։

Հայտնի է, որ Արտաշեսը Սևանի ավերին գտնված արամեական արձանագրություններում անվանում է իրեն «Արտաշես արքա, Զարեհի որդի, Երվանդական»[4], այսինքն իրեն համարում է իր իսկ տապալած Երվանդյան դինաստիայի շառավիղ։ Պետք է ասել, որ այս քայլի մեջ արտառոց ոչինչ չկա, հին աշխարհում այն եթե ոչ սովորական, գոնե հաճախակի հանդիպող երևույթ էր, որի դրդապատճառները զուտ քաղաքական բնույթ էին կրում։ Իշխանությունը գրաված նոր տիրակալը իրեն հայտարարում էր նախորդ դինաստիայի շարունակողը, որպեսզի դրանով ամրապնդի իր իշխանության իրավական հիմքերը և բարձրացնի իր հեղինակությունը։ Հեռու չգնալու համար, որպես օրինակ կարելի է հիշատակել հենց նույն Երվանդյաններին, որոնք, լինելով ըստ Ստրաբոնի պարսկական մի մեծատոհմիկի սերունդ (Strab., XI, 14, 15), հայտարարում էին իրենց Աքեմենյանների հետնորդներ[5]։

Նմանօրինակ քայլ է կատարել և Արտաշեսը, որին հավանորեն հատկապես հրապուրել է Երվանդյանների միջոցով Աքեմենյանների տան հետ առնչվելու հնարավորությունը։ Սակայն Երվանդյանները իրենց հավակնությունների համար իրական հիմք ունեին. նրանցից մեկը՝ Հայաստանի սատրապ Երվանդը (մ. թ. ա. V—IV դարերի եզրին) իսկապես որ ամուսնացած է եղել Աքեմենյան Արտաքսերքսես Գ-ի դստեր Հոդոդոյների հետ[6]։ Այսպիսի մի հիմք ունեցած պիտի լինի նաև Արտաշեսը։ Հավանական է, որ նա իգական գծով ծագում էր իշխող դինաստիայից (մի բան, որ Խորենացու մոտ, վերը հիշատակված

---

[3] Տե՛ս В. В. Струве, Хрестоматия по древней истории. т. I, М., 1936, էջ 42։

[4] Այս արձանագրություններից առայժմ գտնված է մինչև օրինակ։ «Երվանդական» տերմինի մասին տե՛ս А. Я. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2, էջ 103. И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1955, № 2, էջ 168, ծան. 1. Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի նորագյուտ արձանագրությունը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10, էջ 108։

[5] K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 303.

[6] Նույն տեղում, էջ 283, 305, ինչպես նաև Xen., Anab., III, 4, 13։

պաշտոնական տեսակետին հատուկ դերերի փոփոխմամբ, վերագրված է բրոնակալ Երվանդին)։ Անուղղակիորեն դրա օգտին է վկայում նաև այն հանգամանքը, որ «Արտաշես» անունը ընդունված է եղել Երվանդյանների տոհմում. Նեմրութ դաղի արձանագրություններում այն հանդիպում է «Արտասուրա» ձևով[7]։ Արտաշեսի հայրը՝ Զարեհը՝ Հայաստանի մեծատոհմիկներից մեկը, կարող էր ամուսնացած լինել Երվանդյան թագավորող տոհմին պատկանող կանանցից մեկի հետ, այստեղից էլ Արտաշեսի առնչությունը այդ դինաստիային։

Արտաշեսը ծնված պիտի լինի մ. թ. ա. 230-ական թվականներին։ Նա հասունացել է այնպիսի մի ժամանակ, երբ Սելևկյանները իրենց գերիշխանությունն էին հաստատել Հայաստանի վրա։ Ինչպես իր սերնդի և ծագման շատ մարդիկ, նա ծառայել է Սելևկյանների բանակում, հասել բարձր պաշտոնների և ի վերջո Անտիոքոս Գ-ի կողմից Հայաստանի ստրատեգ (կառավարիչ) նշանակվել։ Հայաստանի հարավ-արևմտյան մասում՝ Ծոփքում, ստրատեգ է կարգվել Արտաշեսի զինակիցը ու ազգակիցը, մի գուցե նաև տոհմակիցը՝ Զարեհը[8]։

Թե երբ է տեղի ունեցել Երվանդյանների բարձումը, ստույգ ասել դժվար է։ Հնարավոր է, որ նրանք տապալվեցին Հայաստանում սելևկյան ստրատեգների հաստատման կապակցությամբ[9]։ Համենայն դեպս վերջին Երվանդը, ինչպես երևում է Խորենացու հաղորդածից, զիջել է գահը միայն կատաղի պայքարից հետո[10]։

Արտաշեսն ու Զարեհը որոշ ժամանակ կառավարել են որպես Սելևկյանների ներկայացուցիչներ, միաժամանակ, իհարկե, հող նախապատրաստելով ապագա անկախության համար։ Երբ Անտիոքոս Գ-ի և հռոմեացիների միջև ծավալված պայքարը հասավ իր վախճանին և Անտիոքոսը, ինչպես ասվեց, ծանր պարտություն կրեց Մագնեսիայի մոտ (190 թ.) Հայաստանի ստրատեգները, որոնք այդպիսի մի առիթի էին սպասում, հարեցին հռոմեացիներին և թոթափեցին Սելևկյանների լուծը, հայտարարելով իրենց անկախ թագավորներ՝ յուրաքանչյուրն իր կառավարած երկրամասում։

Հույն պատմաբան ու աշխարհագրագետ Ստրաբոնը տալիս է այդ իրադարձությանը հաջորդած պատմական անցքերի՝ հայկական պետության սահմանների ընդարձակման հակիրճ բայց զարմանալի վառ իր հանրահայտ նկարագրությունը (XI, 14, 15) եզրափակելով այն «այսպիսով բոլորը միալեզու են» բառերով։ Ստրաբոնը այս վիճակը գնահատում է որպես իր նկարագրած նվաճումների անմիջական հետևանք։ Սակայն հայացք ձգելով ժամանակի պետական բազմատարր ու խայտաբղետ միավորումների վրա (բերենք որ-

---

[7] K. Humann und O Puchstein, հիշ. աշխ., էջ 283։

[8] Արտաշեսի և Զարեհի տոհմակցության մասին է ակնարկում վերջինի անվան և առաջինի հոր անվան համընկնումը։

[9] Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի դրվագներ Հայաստանի ն. մ. թ. III—II դդ. պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 17 և հետ.։

[10] Խորենացին մանրամասն նկարագրում է այդ պայքարը, նշում «պարթևական» զորքերի գլուխ կանգնած Արտաշեսի երթուղին, պատմում Երվանդավանի մոտ տեղի ունեցած ճակատամարտի, Երվանդի փախուստի, Երվանդաշատ մայրաքաղաքի առման և Երվանդի վախճանի մասին (II, 46)։ Այս տեղեկությունների մի որոշակի մասը անշուշտ պատմական է։

պես օրինակ Սելևկյանների պետությունը), համոզվում ենք, որ տարբեր էթնիկական տարրերի զուտ քաղաքական միավորումը, անգամ երկարատև ժամանակով, երբեք չէր հանգեցնում այդ տարրերի միալեզու դառնալուն, թեև տեղի էին ունենում համահարթման այլ պրոցեսներ։ Սելևկյանների պետությունն իր գոյության 200-ից ավելի տարիների ընթացքում ամենևին միալեզու չդարձավ, իսկ չէ որ Ստրաբոնին Արտաշեսի ժամանակից բաժանում է ավելի կարճ ժամանակաշրջան[11]։

Միալեզու դառնալու պատճառն, ուրեմն, սոսկ նվաճումների մեջ չէր, այլ առավել չափով նրանց նախորդող ազգակազմավորման այն պրոցեսների, որոնցով, ինչպես ասվեց, համակվել էր Հայկական բարձրավանդակը։ Նվաճումները քաղաքական ձևավորում տվեցին արդեն իսկ նշանակալից չափով գոյություն ունեցող էթնիկական այդ իրավիճակին, և, իհարկե, նպաստեցին նրա հետագա ամրապնդմանը, այսինքն հայկական էթնոսի զարգացմանը[12]։ Ստրաբոնի նկարագրած իրադարձությունները, այսպիսով, ավելի ճիշտ կլինի բնութագրել «միավորում» և ոչ «նվաճում» բառով։

Ստրաբոնի պատմածից երևում է, որ հայկական պետությունը ընդարձակվել է բոլոր չորս ուղղություններով. դեպի արևելք՝ Ատրոպատյան Մարաստանի կողմը, հյուսիս՝ Վիրքի կողմը, արևմուտք՝ Փոքր Հայքի կողմը և վերջապես հարավ՝ Ասորիքի, այսինքն՝ Սելևկյանների պետության կողմը։ Այս առաջխաղացման առանձին փուլերի հերթականության ժամանակագրությունը պարզ չէ, բայց հիմք կա կարծելու, որ Ստրաբոնի մոտ տեղ գտած թվարկման կարգը հիմնված է ժամանակագրական հերթականության վրա։

Արևելյան ուղղությամբ կատարված արշավանքների հետևանքով ձեռք բերված՝ Ստրաբոնի հիշատակած երեք երկրամասերից՝ Կասպիանե, Փավնիտիս, Բասորոպեդա, վերջինս հավանորեն համընկնում է Պարսպատունիք գավառի հետ[13], երկրորդի տեղը պարզ չէ, իսկ առաջինը՝ Կասպիանեն, քաջ հայտնի է։ Դա Կուրի և Արաքսի միախառնման տեղից մինչև Կասպից ծովն ընկած երկիրն է, որը նույնանում է Փայտակարանի հետ[14]։ Մ. Խորենացին այն անվանում է Կասբից երկիր[15] և մանրամասնություններ հաղորդում Արտաշեսի՝ դեպի այդ կողմը կատարած արշավանքի մասին[16]։ Խորենացու պատկերացմամբ, այդ երկիրը Հայաստանի իշխանության տակ է եղել դեռ Արտաշեսից առաջ և նրա օրոք ապստամբվել է։ Արտաշեսը զորք է ուղարկել զորավար Սմբատի ղեկավարությամբ, որը ճնշել է ապստամբությունը և գերեվարել երկրի թագավորին ու բնակչության մեծ զանգվածներ։

Խորենացու «Հայոց պատմության»՝ Արտաշեսի գործունեությանը նվիրված գլուխներում հիշողություններ են պահպանվել նաև հյուսիսային արշավանքների մասին։ Վրաց արքան ապստամբեցնում է հյուսիսային կողմերը և գերի վերցնում արքայորդիներից մեկին՝ Զարեհին, որը նշանակված էր հյուսիսային զորքի հրամանատար։ Արտաշեսը զորք է ուղարկում Վրաստան և ազատագրում Զարեհին (II, ԺԳ)։ Նույն այս արշավանքների պատմության վե-

---

11 Ստրաբոնը ապրել է մ. թ. ա. 60—մ. թ. 20 թթ.։

12 Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 118։

13 Ըստ Ս. Տ. Երեմյանի կարծիքի։

14 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 57։

15 Մ. Խորենացի, II, ԺԳ, տես Ս. Տ. Երեմյան, հիշ. աշխ., էջ 67, 88։

16 Տե՛ս Գ. Տիրացյան, հիշ. աշխ., էջ 8 և հետ.։

բաբերյալ ավելի մանրամասն մի վերսիա պահպանվել է «Քարթլիս ցխովրեբա»-ում[17], ուր նկարագրված է երեք արշավանք։ Առաջին անգամ արշավում է ինքը՝ Արտաշեսը, գրավում Ոդխերը, հպատակեցնում երկիրը և հեռանում։ Երկրորդ անգամ արշավում է նրա որդի Զարեհը ճնշելու վրացիների և օսերի ապստամբությունը։ Զարեհը դուրս է բռնկում։ Երրորդ անգամ՝ Արտաշեսը, Սմբատ զորավարը՝ Արտավազդ և Տիգրան արքայորդիների հետ։ Նրանք ազատում են Զարեհին և պայմանագիր կնքում, որի համաձայն վրացիները և օսերը պարտավորվում են պատերազմի դեպքում ժամանակ զորք տրամադրել Արտաշեսին և նրա պատկերով դրամ կտրել։

Թերևս նույն հյուսիսային արշավանքների արձագանքն է հնչում նաև հայերի և Հյուսիսային Կովկասի լեռնաբնակ ալանական ցեղերի՝ Վրաստանի տերիտորիայի վրա տեղի ունեցած պատերազմի պատմության մեջ[18]։ Այս ցեղերի նվաճման մասին պատմելիս Խորենացին նորից հիշատակում է մեծ քանակությամբ մարդկանց գերեվարություններ դեպի Հայաստան։

Ստրաբոնի տեղեկությունները հյուսիսային արշավանքների մասին շատ որոշակի են. նրանց հետևանքով հայկական պետությանն են միացվել Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտի հողերը, այսինքն Ճորոխ գետի հովտի մի մասը, որը համապատասխանում է Տայքին[19], Խորձենեն, այսինքն Կղարջք գավառը[20] և Գոդարենեն, այսինքն Գուգարքը։

Արտաքին ընդարձակման զուգընթաց, հայկական պետությունն ապրում էր ներքին բուռն զարգացման ժամանակաշրջան։ Մոտ անցյալի համեմատաբար փոքր և թույլ թագավորությունից, որի մեջ պահպանվում էին աքեմենյան սատրապության վարչական կառուցվածքի շատ գծեր, Հայաստանը վերածվում էր տնտեսապես ուժեղ, ինքնուրույն ու ընդարձակ պետության և բնականաբար կարիք էր զգում բազմաթիվ բարեփոխությունների՝ տնտեսական, վարչա-քաղաքական, ռազմական, մշակութային և այլ բնագավառներում, որոնք և հետզհետե պետք է իրականանային։

Այդ բարեփոխությունների շարքում կարևոր տեղ է գրավում հողային ռեֆորմը, որի անհրաժեշտությունը թելադրվում էր երկրում մասնավոր հողատիրության և ստրկատիրության զարգացման արագ տեմպերով։ Այդ պրոցեսները, որոնց մասին անհրաժեշտ է ավելի մանրամասն պատկերացում տալ, անշուշտ ծայր էին առել դեռ շատ վաղուց, դեռևս Աքեմենյանների տիրապետության ժամանակ, բայց առանձնապես ուժեղացել էին հելլենիստական պետությունների առաջացման ժամանակաշրջանից։

Սկզբնապես, երկրի բնակչության համեմատական նոսրության պայմաններում, երկրագործության համար պիտանի և հատուկ մելիորատիվ աշխատանք չպահանջող բոլոր հողերը չէին, որ մշակվում էին։ Այսպես, Քսենոֆոնի կտրած-անցած Հայաստանում գյուղերը, կամ ավելի ճիշտ դյուղախմբերը, միմյանցից բավական հեռու տարածության վրա էին գտնվում (Xen., Anab.,

---

17 Տե՛ս Լ. Մ. Մելիքսետ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 158—160։

18 Մ. Խորենացու հաղորդած այս ավանդության մեջ (II, Մ, ՌԻ) թերևս իրար են խառնած երկու պատմական անձնավորություններ. Արտաշես Ա-ը իր հյուսիսային արշավանքներով և Տրդատ Ա-ը (մ. թ. 66— մոտ 80 թթ.) ալանների դեմ իր մղած պատերազմներով։

19 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, տես քարտեզը։

20 Ս. Տ. Երեմյան, հիշ. աշխ., էջ 59, հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն, էջ 117։

IV, 4—5)։ Խնդիրն այն է, որ համայնքի կողմից հողի մշակման հնարավորությունը չէր կարող անցնել որոշակի սահմաններից նաև ազատ հողերի գոյության դեպքում, որովհետև այն սահմանափակված էր համայնականների առկա աշխատավոր ձեռքերով, որոնց թիվը շատ դանդաղ էր աճում։

Այլ բան է մասնատիրական տնտեսությունը, որի մեջ կիրառվող ստրկական ուժի աճը կախված էր միայն տիրոջ կարողության սահմաններից, այսինքն ընդունակ էր հասնելու մեծ չափերի։

Հելլենիստական ժամանակաշրջանում մասնատիրական տնտեսությունների զարգացման համար ստեղծվեցին շատ բարենպաստ պայմաններ։ Տնտեսական ընդհանուր վերելքը (ներառյալ տարանցիկ ու ներքին առևտրի լայնացումը), որի մեջ էր ներգրավվել նաև Հայաստանը, ստրկական ուժի բազմապատկման արտաքին, ինչպես նաև ներքին մեծ հնարավորությունները, որոնք ընձեռվում էին մի կողմից բազմաթիվ նվաճողական պատերազմներով, մյուս կողմից հասարակության սոցիալական շերտավորման ու բևեռացման ուժեղացմամբ, վերջապես նորանոր հողերի յուրացումը, մի բան, որ պետությունը խրախուսում և օժանդակում էր, բոլոր այս հանգամանքները խթանում էին Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը ստրկատիրության ուղիներով։

Ահա այդ ժամանակներն էր, որ պիտի ծագեր «դաստակերտ», այսինքն՝ «ձեռքով մշակված» հողի հասկացությունը. «երբ զինվորական ավագանին յուրացնում ու կենդանացնում էր ապարդյուն մնացած հողերը, որոնց վրա չէր տարածվում գյուղական համայնքների տիրապետման իրավունքը»[21]։ Այդ հասկացությունը առաջ էր գալիս ի տարբերություն հնից եկող «ագարակ»-ի, որը նշանակում էր ընդհանրապես վարելադաշտ-վարելահող։ Հետագայում այդ տերմինները նույնացան և հավասարապես օգտագործվում էին մասնատիրական տնտեսությունների նկատմամբ[22]։

Աղբյուրների ներկա սուղ պայմաններում սկզբնական «ձեռքով մշակված վարելադաշտի» դեպի հետագայի կոմպլեքսային բարդ տնտեսություն-բնակավայրերը Հայաստանում անցած ուղու առանձին փուլերը չեն նշմարվում ու սահմանազատվում, և նման տնտեսության ամենահին բնութագիրը հայկական աղբյուրների մեջ մնում է Խորենացու տված՝ Երվանդակերտ դաստակերտի պերճ ու գունեղ հայտնի նկարագրությունը (II, խբ)։

Միանգամայն պարզ է, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե հելլենիստական շրջանի մի դաստակերտի նկարագրության, այլ դաստակերտների մասին Խորենացու պատկերացման հետ, բայց սա էլ քիչ արժեք չունի. ինչպես Խորենացու մի շարք այլ տվյալների մեջ, որոնց մասամբ անդրադարձանք, այստեղ ևս արտացոլված է մի երևույթ, որի արմատները հասնում են մինչև հելլենիստական շրջան։ Այդ պարզ է դառնում, երբ համեմատում ենք Խորենացու տվյալները դաստակերտի ավելի վաղ շրջանից եկող բնութագրի հետ, որը պահպանվել է այսպես կոչված «Բաբելոնյան թալմուդում» (մ. թ. առաջին դարեր)[23], ինչպես նաև մասնատիրական տնտեսության էլ ավելի հին (մ. թ.

---

[21] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении. ВДИ, 1950, № 1, էջ 21։

22 Նույն տեղում։ Գ. Սարգսյան, Դաստակերտները և ագարակները V դարի հայկական աղբյուրներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 3, էջ 82։

[23] С. Т. Еремян, տրվ. աշխ.։

ա. III դար) նկարագրության հետ, որը գտնում ենք Փոքր Ասիայից ծագող մի արձանագրության մեջ[34]։

Համեմատությունը ցույց է տալիս, որ նմանությունը սոսկ արտաքին բնույթ չէր կրում։ Խորենացու, ինչպես նաև հայկական այլ աղբյուրների (Փարպեցի, Ագաթանգեղոս) տվյալները դաստակերտներում աշխատող «ծառայ»-ների և մշակների մասին, համընկնում են հելլենիստական շրջանի մասնատիրական տնտեսություններում աշխատող այն ստրուկ-հողագործների նկարագրի հետ, որոնց, ի տարբերություն կլասիկ տիպի ստրուկների, ընդունված է անվանել «հողի վրա բնակեցված (նստեցված) ստրուկներ»։ Նրանք թեև ընչազուրկ էին և անվերապահորեն գտնվում էին տիրոջ տրամադրության տակ, սակայն նրանց կցված էին հողակտորներ, տրված որոշ գործիքներ ու ընտանիք կազմելու իրավունք։ Իրենց կցված հողամասի բերքից նրանք որոշակի բաժին էին ստանում։

Ստրկական ուժի աղբյուրները Հայաստանում նույնն էին, ինչ որ հարևան երկրներում, այն է՝ ներքին և արտաքին։

Արևելյան երկրներում ներքին աղբյուրը հատկապես մեծ նշանակություն է ունեցել։ Պարտային ստրկության, տաճարային նվիրատվությունների, երեխաների վաճառքի, ինքնավաճառքի, հանցագործների ստրկացման և այլ երևույթների մասին (որոնց հանրագումարը հենց կազմում է ստրկական ուժի ներքին աղբյուրը) մեզ հասած տեղեկությունները ծագում են Եփրատի միջին հոսանքում տեղավորված Դուրա-Եվրոպոսում, Բաբելոնիայի քաղաքներում, Շոշում և այլ վայրերում գտնված վավերագրերից։ Հայաստանում, դժբախտաբար, նման վավերագրերի հետ միասին գրեթե բացակայում են նաև ստրկության ներքին շուկայի մասին տեղեկությունները։

Դրա փոխարեն առկա անտիկ և հայկական մատենագրական աղբյուրները մի շարք տեղեկություններ են տալիս ստրկական ուժի արտաքին աղբյուրների՝ պատերազմների և նվաճումների ժամանակ կատարվող գերեվարությունների մասին։ Կարևորագույն տվյալները վերաբերում են, իհարկե, Տիգրան Բ-ի ժամանակաշրջանին, սակայն աղբյուրները ցույց են տալիս, որ գերեվարությունները հատուկ են եղել ոչ միայն այդ ժամանակաշրջանին, այլ կիրառվել են նաև նրանից առաջ՝ մ. թ. ա. II դարի առաջին կեսում ու հանդիսացել Հայաստանի ստրկատիրական տնտեսության զարգացման կարևոր գործոններից մեկը։ Մովսես Խորենացին, նկարագրելով Արտաշես Ա-ի օրոք կատարված խոշոր գերեվարությունները, իր պատմածը եզրափակում է հետևյալ խոսքերով. «Արտաշեսը բազմամարդացրեց Հայոց աշխարհը բազմաթիվ օտար ազգեր ներմուծելով և բնակեցնելով լեռներում, դաշտերում և հովիտներում» (II, ԾԶ)։ Այս տեղեկությունները իրենց կողմնակի հաստատումն են գտնում Ստրաբոնի, արդեն մեկ անգամ վերը մեջբերված, տվյալներում, որոնք, թեև չհիշատակելով գերեվարությունների մասին, տալիս են Արտաշեսի օրոք կատարված նվաճումների վառ պատկերը։

Գերեվարվածների մի մասը ստրկացվում էր։ Ռազմագերիների ստրկացման մասին Խորենացու մոտ պահպանվել է հնագույն ժողովրդական էպոսից մի հատված, ուր խոսքը նորից Արտաշես Ա-ի ժամանակների մասին է։ Այս-

[34] W. N. Buckler and D. M. Robinson, Greek Inscriptions from Sardes, I, „American Journal of Archaeology", XVI, էջ 12 և հետ.

տեղ այդ գործողությունը բնութագրված է որպես «ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել» (այսինքն «ծառայ» դարձնելով պահել ստրուկների կարգում), արտահայտություն, որը իր հակիրճությամբ և հստակությամբ ավելի շուտ նման է իրավաբանական ֆորմուլայի և գուցե հենց այդպիսին էլ հանդիսացել է[25]։

Ստրկացված գերիները օգտագործվում էին տնտեսության տարբեր ճյուղերում։ Խորենացին հիշատակում է, որ Արտաշեսի զորավար Սմբատի կողմից բռնագրավված 500 «ծառայ»-ները, իսկ մի այլ դեպքում՝ գերեվարված ծարները, բնակեցվում էին դաստակերտներում (I, Լ, II, ԽԸ), այսինքն վերածվում էին մասնատիրական տնտեսություններում աշխատող մշակների՝ հողի վրա նստած ստրուկների։

Այդ հանգամանքը առանձնապես մեծ նշանակություն ուներ մասնատիրական նոր տիպի, ստրկական աշխատանքով վարվող տնտեսությունների՝ դաստակերտ-ագարակների առաջացման և բազմացման համար։

Հողի մասնավոր սեփականության զարգացումը վտանգավոր էր համայնական հողատիրության համար։ Սկզբում մասնավոր հողատերերին բաժին էին ընկնում խամ ու խոպան, գյուղական համայնքների կողմից չօգտագործվող ու նրանց սահմաններից դուրս գտնվող հողերը, ապա հերթը հասնում էր նաև համայնային հողերին։ Հարուստ և ուժեղ հողատեր-ստրկատերերը այս կամ այն ձևով փորձում էին յուրացնել նաև այդ հողերի մի մասը։ Համայնքը չէր կարող հանդուրժել իր հողերի ջլատումը և ծավալված պայքարը երևի ուղեկցվել է սուր բնդհարումներով։

Այս վիճակին վերջ պիտի դներ ագրարային ռեֆորմը, որի էությունը, ըստ երևույթին, մասնավոր և համայնային հողերի հստակ սահմանազատման մեջ էր։ Ռեֆորմը ելնում էր նորելուկ հողատեր-ստրկատերերի շահերից, քանի որ օրինականացնում էր տեղի ունեցած փոփոխությունները։ Բայց միևնույն ժամանակ այն ուղղված էր նաև համայնքի դիրքերի եթե ոչ ամրապնդմանը, գոնե պահպանմանը։ Չպետք է մոռանալ, որ համայնքն էր հիմնական հարկային միավորը, և նա էր տալիս թագավորին հետևակ զորքի մեծ մասը և օժանդակ զորամասեր։

Հողային ռեֆորմի հուշարձաններ են Սևանա լճի ափին գտնված այն սահմանաքարերը, որոնց վրա արամերեն գրված է Արտաշեսի անունը, տիտղոսը և ծննդաբանությունը, ինչպես նաև նշված է, որ քարերը գրված են հողի բաժանման կապակցությամբ[26]։ Մ. Խորենացին ճիշտ է կռահել դրանց նշանակությունը, ասելով, որ Արտաշեսը այդ քարերով որոշեց «գյուղերի (այսինքն համայնքների — Գ. Ս.) և ագարակների (մասնատիրական տնտեսությունների — Գ. Ս.) սահմանները» (II, ԾԶ)։

Ընդարձակված պետության կառավարման գործի դյուրացման նպատակն

---

[25] Մ. Խորենացի, II, Ծ։ Տե՛ս С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 4.

[26] Հրատարակությունները տե՛ս վերը, 67 էջի 4 ծանոթագրությունում։ Տե՛ս նաև A. Dupont-Sommer, Deux inscriptions arameennes trouvees près du lac Sevan (Arménie), „Syria", XXV (1946—1948), № 1—2, էջ 149 և հետ. К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 162 և հետ.։

է հետապնդել երկրի վարչական բաժանման ռեֆորմը, որը կատարվել է Արտաշեսի կամ մի գուցե նրա հաջորդների օրոք[27]։

Կատարված բազմաթիվ արշավանքները վկայում են, որ ռեֆորմի պետք է ենթարկված լիներ նաև ռազմական բնագավառը՝ զորքի հավաքագրման, կազմավորման ու ղեկավարման գործը։ Անտիկ հեղինակներն այս մասին կոնկրետ տեղեկություններ չեն տալիս։ Խորենացին է, որ հաղորդում է մի բարեփոխության մասին. Արտաշեսը զորքի իշխանությունը բաժանել էր չորս մասի, կարգելով արևելյան, արևմտյան, հարավային և հյուսիսային զորավարություններ (II, ԾԳ)։ Այս հաղորդումը փոխարձագանքում է Ստրաբոնի վերոհիշյալ վկայության հետ՝ նույն չորս ուղղություններով կատարված արշավանքների մասին։

Խորենացու մոտ պահպանվել են նաև այլ տեղեկություններ այդ ժամանակ կատարված նորմուծությունների մասին, ինչպես օրինակ, տոմարի վերանորոգման, երկրի լճերի և գետերի վրայով նավագնացության գործի բարեկարգման և այլնի մասին (II, ԾԲ), սակայն այս տվյալները կարոտ են հետազոտման ու ստուգման[28]։

Կարևոր ձեռնարկություն էր թագավորական իշխանության հեղինակությունը բարձրացնելու նպատակով Հայաստանում իշխող դինաստիայի պաշտամունքի հաստատումը։ Սելևկյանների և Պտղոմեանների օրինակով այն ընդունված էր հելլենիստական աշխարհի մի շարք երկրներում։ Լավագույն ու մերձավոր օրինակներ են Հայաստանի համար հարևան Կոմմագենեում հիմնված ու Երվանդյանների տոհմի պաշտամունքին նվիրված տաճարները, հատկապես Նեմրութ-դաղ լեռան վրա կառուցված հոյակապ սրբավայրը[30]։ Այստեղ Զեվս-Արամազդի, Ապոլոն-Միհր-Արև-Հերմեսի, Վահագն-Հերակլես-Արևսի և Կոմմագենե երկիրը սնող աստվածուհու կողքին, որոնց հսկայական քարե արձանները զարդարում են սրբատեղին, պաշտամունքի առարկա էր դարձված ինքը սրբավայրի հիմնադիրը՝ Անտիոքոս Ա Կոմմագենացին (97—34 թթ. մ. թ. ա.) և նրա նախնիները արական ու իգական գծով։ Երվանդյանները իրենց ծննդաբանությունը հասցնում էին մինչև Աքեմենյանները և Սելևկյանները։ Սրբատեղիում հաստատված էին բոլոր այդ նախնիների մեծադիր բարձրաքանդակները՝ համապատասխան հունարեն արձանագրություններով։ Գլխավոր արձանագրության մեջ բացահայտվում էր սրբատեղիի հիմնադրման նպատակը և թվարկվում էին արքայական նվիրատվությունները, նույն թվում «բավարար քանակությամբ հողերը և նրանցից անխախտ կերպով ստացվող եկամուտը»[31]։

Այդ սրբատեղին պարզ պատկերացում է տալիս, թե ինչպիսի կառուցվածք ու տեսք պիտի ունենային Հայաստանի նմանօրինակ սրբավայրերը։ Դրանց

---

[27] Plin. Nat. hist., VI, 9։ Պլինիոս ավագը մահացել է մ. թ. 79 թ.։ Դիչ հավանական է, որ նրա հիշատակած վարչական տերիտորիալ բաժանումը կատարված լինի Արշակունիների օրոք, որովհետև նրանք իշխանության գլուխ են անցել Պլինիոսի մահվանից ընդամենը 13 տարի առաջ՝ մ. թ. 66 թ.։ Ռեֆորմը չէր կարող իրականացված լինել նաև մ. թ. I դարի առաջին կեսում, երբ Հայաստանի դահի վրա անընդհատ փոփոխվում էին Օտարազգի թագավորները։ Հավանաբար այն անց է կացվել Արաշիայանների ժամանակ։

[28] Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 130։

[29] Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, էջ 37 և հետ.։

[30] K. Humann und O. Puchstein, հիշ. աշխ., էջ 232 և հետ.։

[31] Նույն տեղում, էջ 273։

հիմնադրումը Խորենացին վերագրում է կիսապատմական Վաղարշակ թագավորին. «... մեհյաններ շինելով Արմավիրում, — պատմում է Խորենացին, — նա հաստատում է այստեղ Արեգակի, Լուսնի և իր նախնիների անդրիները» (II, Ը)։ Իսկ Արտաշեսի մասին պատմում է, թե նա մեհյան է շինել Արտաշատում ու այնտեղ տեղափոխել Արևի և Լուսնի (որոնք այս դեպքում անվանված են համապատասխանաբար Ապողոն և Արտեմիս՝ ճիշտ և ճիշտ Նեմրութ-դաղի նման) պատկերները, ինչպես և նախնիների կուռքերը (II, ԽԹ)։ Ագաթանգեղոսը, խոսելով այս սրբավայրի մասին, հիշատակում է նույն աստվածությունների անունների երրորդ, հայկական զույգը՝ Տիր և Անահիտ[32]։ Քանի որ Արտաշես Ա-ը, դատելով Սևանա լճի ափին գտնված արձանագրություններից, իրեն սերված էր համարում նաև Երվանդյան տոհմից, ապա հնարավոր է և հավանական, որ նախնիների շարքում բացի իր հորից՝ Զարեհից ու նրա նախորդներից, պատկերված են եղել Երվանդյանները ու թերևս նաև սրանց հետ կապված Աքեմենյանները[33]։ Նախնիների պաշտամունքի արտահայտություններից մեկն էլ այն է եղել, որ Արտաշեսը իր հիմնադրած քաղաքներից մի քանիսը անվանակոչել է, ինչպես կտեսնենք, իր հոր՝ Զարեհի անունով։

Արտաշեսի ռեֆորմների մասին մեր տեղեկությունները, իհարկե, անհամեմատ ավելի քիչ են, քան իրականացվածը, բայց այդ քիչն էլ, ընդգրկելով հասարակական կյանքի շատ բնագավառներ, ցույց է տալիս, որ ի դեմս Արտաշեսի հայ ժողովուրդը առաջադրել է ոչ միայն տաղանդավոր ու հաջողակ մի զորավարի, այլև մեծ քաղաքագետի և պետական գործչի։

Ժամանակի կարևոր երևույթներից էր նաև քաղաքաշինությունը։ Հելլենիստական Առաջավոր Ասիան ընդգրկած այդ հզոր պրոցեսը, որի ընթացքում ստեղծվել էին հարյուրավոր նորանոր քաղաքներ, իր արդյունքներն էր տվել Հայաստանում արդեն մ. թ. ա. III դարում։ II դարում այդ գործը շարունակվեց ավելի մեծ մասշտաբներով։ Դրա լավագույն արտահայտությունն էր Հայաստանի նոր մայրաքաղաքը՝ Արտաշատը։ Պատահական չէ, որ այն կառուցվել է Արաքսի միջին հոսանքի հովտում՝ Արարատյան դաշտի շրջակայքում։ Այստեղ են գտնվել պատմական Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիր, Երվանդաշատ, հետագայում Վաղարշապատ, Դվին (այժմ էլ այստեղ է ընկած Երևանը)։ Արարատյան դաշտը, սկսած մ. թ. ա. IV դարից, դառնում է Հայաստանի սիրտը։ Այստեղ էին խաչաձևվում հարավից դեպի հյուսիս, և Արաքսի վրայով՝ արևելքից դեպի արևմուտք տանող տարանցիկ առևտրական ուղիները, մի հանգամանք, որ վճռական նշանակություն ուներ Արարատյան դաշտի քաղաքների համար։ Ռազմա-ստրատեգիական տեսակետն էլ անշուշտ իր դերն է խաղացել քաղաքի կոնկրետ տեղը որոշելիս։ Ըստ Պլուտարքոսի, Արտաշատի տեղանքի ընտրողն է եղել Հաննիբալը՝ Հռոմի երբեմնի ահեղ թշնամին, որը իր հովանավորող Անտիոքոս Գ-ի պարտությունից հետո ապաստանել է Հայաստանում և «բազմաթիվ օգտավետ գործերում խորհրդատու եղել Արտաշեսին»։ Նկատելով «չօգտագործված ու անտեսված հարմարա-

---

32 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 404։

33 Տե՛ս Գ. Տիրացյան, հիշ. աշխ., էջ 14։ Ինչ վերաբերում է Սելևկյաններին, ապա նրանց հետ Երվանդյանների ազգակցական կապը հաստատվել է ավելի ուշ շրջանում՝ II դարի վերջերին. տես K. Humann u. O. Puchstein, հիշ. աշխ., էջ 313. Սելևկյանների տոհմից էր Անտիոքոս Կոմմագենացու մայրը՝ Լաոդիկեն։

պույն ու խիստ հաճելի մի վայր, նա տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը։ Թագավորը հավանեց և՛ տեղանքը և՛ հատակագիծը ու այսպիսով կառուցվեց «մի մեծ ու շատ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց թագավորի անունով և հայտարարվեց Հայաստանի մայրաքաղաք» (Plut., Luc., 33)։

Որոշ գիտնականների տարակուսանքը Հաննիբալի՝ Հայաստանում լինելու հնարավորության մասին[34] չի նսեմացնում սույն հաղորդման կարևորությունը։ Անկախ Հաննիբալի մասնակցության հարցի այս կամ այն լուծումից, Պլուտարքոսի հաղորդումից մենք իմանում ենք երկու բան. քաղաքի արտաքին տեսքը խոսում էր այն մասին, որ, նախ՝ նրա տեղը ընտրված է զորավարի աչքով և, երկրորդ, որ այն կառուցված է մեկ միասնական հատակագծի հիման վրա։ Անշուշտ քաղաքը պիտի կառուցված լիներ ժամանակի հելլենիստական քաղաքաշինության բոլոր կանոններով, ուղղանկյուն թաղամասեր կազմող խաչավորված փողոցներով և այլն։ Հենց այդ հանգամանքներն են, որ առիթ են տվել Ստրաբոնին ասելու, թե Արտաշատը «գեղեցկապես շինված-բնակեցված է և երկրի թագավորանիստ քաղաքն է։ Գտնվում է գետի թերակղզի կազմող անկյունում, պարսպապատ է գետափի երկայնքով, բացի պարանոցից, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով» (Strab., XI, 14, 6)։

Արտաշատի հիմնադրման մասին պատմում է նաև Խորենացին։ «Արտաշեսը գնում է այն տեղը, ուր խառնվում են Արաքսը և Մեծամորը և հավանելով բլուրը՝ այստեղ քաղաք է շինում անվանելով այն իր անունով Արտաշատ... և հանելով Երվանդի քաղաքից դերի հրեաների բազմությունը նստեցնում է նրանց Արտաշատում» (II, ԽԹ)։ Այստեղից իմանում ենք, որ Արտաշատ է տեղափոխվել Երվանդաշատի բնակչության մի մասը[35]։ Սակայն քաղաքային կյանքը թույլ էր զարգացած Հայաստանում և քաղաքների թիվը փոքր էր, ուստի հնարավոր չէր սահմանափակվել միայն այլ քաղաքներից մարդիկ վերաբնակեցնելով։ Անշուշտ, նորաստեղծ Արտաշատում էր տեղավորվել նաև ռազմական արշավանքների ընթացքում գերեվարված բնակչության մի մասը։

Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ Արտաշատը միակ նորաստեղծ քաղաքը չէր, որ բնակչության կարիք էր զգում։ Հիմք կա կարծելու, որ հիմնադրվել են Արտաշեսի անունը կրող ևս երկու քաղաքներ. մեկը՝ Վանա լճի արևելյան ափին[36], մյուսը՝ Նախճավանի կողմերում[37]։ Բացի այդ, հիմնադրվել են նաև մի շարք այլ քաղաքներ, որոնք անվանվել են ոչ թե իրեն Արտաշեսի, այլ նրա հոր՝ Զարեհի անունով. դրանք են՝ Վասպուրականի Զարեհավանը, Բագրևանդի Զարեհավանը, Արշարունիքի Զարեհավանը, Աղիովտի Զարիշատը և Վանանդի Զարիշատը։ Նոր հիմնադրված քաղաքը իշխող թագավորի հոր անունով անվանակոչելը նույնպես հելլենիստական քաղաքաշինության մեջ ընդունված սովորություններից մեկն է եղել. այսպես, Սելևկյան դինաստիայի

---

[34] Տե՛ս օրինակի համար, Т. Моммзен, История Рима, I, М., էջ 709, ծան.։

[35] Հրեաների հիշատակությունը Խորենացու մոտ տվյալ կոնտեքստում պատմական մի անաքրոնիզմ է։ Իրականում հրեաները մասսայաբար Հայաստան են վերաբնակեցվել Արտաշեսի ժամանակից մեկ դար անց՝ Տիգրան Բ-ի օրոք։ Անաքրոնիզմի պատճառը Խորենացու ժամանակագրության այն յուրահատկությունն է, որի հետևանքով նրա մոտ Տիգրանի թագավորությունը ընկնում է Արտաշեսի թագավորությունից առաջ։

[36] Տե՛ս С. Т. Еремян, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3, էջ 14։

[37] Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 43, և հետ., ծան. 59։

հիմնադիրը՝ Սելևկոս Ա Նիկատորը իր հիմնադրած քաղաքներից 16-ը անվանել է իր հոր՝ Անտիոքոսի անունով՝ Անտիոքներ։ Նրա որդի Անտիոքոս Ա-ը հիմնադրել է մի քանի Սելևկիաներ և այլն (App., Syr., 57)։

Քաղաքների բազմացումը և քաղաքային կյանքի աշխուժացումը Հայաստանում հանդիսանում էր հայկական ստրկատիրական հասարակության բուռն վերելքի դրսևորումներից մեկը, վերելք, որ տեղի էր ունենում հելլենիստական Առաջավոր Ասիայի սոցիալ-տնտեսական նույնքան շեշտակի զարգացման ֆոնի վրա։

Վերելքի մի այլ դրսևորում էր և պետության հետագա ընդարձակումը։ Արևելյան և հյուսիսային ուղղությամբ կատարված արշավանքների հետևանքով Հայաստանին էին միացվել ընդարձակ երկրամասեր, որով պետության սահմանները հասել էին Կասպիականի ափերին՝ արևելքում և Կուր ու Ճորոխ գետերի հովիտներին՝ հյուսիսում և հյուսիս-արևմուտքում։

Երբ, այսպիսով, պետության այդ կողմերը ապահովված էին, հերթը հասավ արևմտյան սահմաններին, ուր վիճակը ավելի բարդ էր։ Այստեղ, Փոքր Ասիայում Փառնակ Պոնտացին, միանալով հարևան Փոքր Հայքի կառավարիչ Միհրդատի հետ, պատերազմ էր սկսել Կապադովկիայի և Բիթանիայի ու սրանց դաշնակցած Պերգամոնի դեմ, որը և տանուլ տվեց[30]։ Արտաշեսին, որը հարել էր կապադովկիական խմբավորմանը, այդ իրադարձությունների ժամանակ, ըստ երևույթին, հաջողվեց միացնել իր պետությանը Փոքր Հայքի արևելյան մարզերից երկուսը՝ Կարենիտիսը (Կարնո գավառ) և Դերքսենեն (Դերջան) (Strab., XI, 14, 5)։ Այս իրավիճակը օրինականացվեց 176 թ. կնքված պայմանագրով, որի մասին մանրամասն տեղեկություններ է տալիս Պոլիբիոսը (XXV, 2, 1—12)։

Հայաստանի արևմտյան քաղաքականության բնագավառում ավելի կարևոր էր Ծոփքի խնդիրը։ Այդ երկիրը, որը բաժին ընկավ Արտաշեսի ընկերակից Զարեհին և որը Մագնեսիայի ճակատամարտից հետո Մեծ Հայքի նման ինքնուրույն թագավորություն հայտարարվեց, անցած տասնամյակի ընթացքում ևս որոշ քայլեր էր կատարել իր հողերի ընդարձակման գծով։ Զարեհին հաջողվել էր նվաճել դեպի հյուսիս ընկած Ակիլիսենեն (Եկեղիքը) և Անտիտավրոսի կողմն ընկած հողերը (Strab., XI, 14, 5)։ Արկաթիասը՝ Զարեհի որդին, հիմնադրել էր Արկաթիոկերտ նոր քաղաքը։

Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքի պետության հետ դիտվում էր որպես կարևորագույն խնդիր։ Կասկածից վեր է, որ քայլեր պետք է ձեռնարկված լինեին այդ խնդիրը լուծելու համար։ Նման քայլերից մեկի հետևանքով Արտաշեսը իր ձեռքն էր դցել որպես պատանդներ Զարեհի որդիներից երկուսին (Diod., XXXI, 22)։

Երբ Զարեհը մահացավ (հավանորեն II դարի 70-ական թվականների կեսերին), նրա գահի շուրջը վեճեր ծագեցին Արտաշեսի և Կապադովկիայի թագավոր Արիարաթի միջև։ Վերջինս պաշտպանում էր Զարեհի ավագ որդու՝ Միթրոբուզանի (Մեհրուժան) թեկնածությունը, իսկ Արտաշեսը ցանկանում էր Ծոփքի գահի վրա տեսնել իր մոտ որպես պատանդ ապրող նրա եղբայրներից մեկն ու մեկին։ Նա պատվիրակներ ուղարկեց Արիարաթի մոտ իր առաջարկը իրականացնելու նպատակով, բայց սա, հակառակ ընդհանուր առմամբ

[30] Th. Reinach, Mithradates Eupator König von Pontos, Lpz., 1895, էջ 35։

նրանց միջև եղած լավ հարաբերությունների և նախկին ռազմական դաշնակցության, խիստ բացասական դիրք բռնեց այս հարցում. Կապադովկիայի համար իր անմիջական հարևան Ծոփքի կողմնորոշումը մեծ նշանակություն ուներ։ Արտաշեսը ինչ-ինչ պատճառներով չցանկացավ սրել հարաբերությունները, և Միթրոբուզանը կապադովկիացիների օգնությամբ բռնեց իր հայրենի գահին[39]։ Այսպիսով, Ծոփքի վերամիավորման հարցը հետաձգվեց գրեթե մեկ հարյուրամյակով։

Մեծ մտահոգության առարկա էր Հայաստանի հարավային սահմանը, որի ետևում գտնվում էին Սելևկյանները։ Սելևկյան պետությունը, թեև նախկին իր հզորությունից զրկված, այսուհանդերձ վտանգավոր հարևան էր, մանավանդ այնպիսի երկրների համար, ինչպիսիք էին Մեծ Հայքը և Ծոփքը, որոնք նոր էին ապստամբվել ու անջատվել նրանից։

Բայց ժամանակը անցնում էր ու Սելևկյանները չէին անդրադառնում Հայաստանին։ Մագնեսիայի ճակատամարտից երեք տարի անց մահացավ Անտիոքոս Գ-ը (187 թ.)։ Նրան հաջորդեց Սելևկոս Դ-ը (187—175), որը գերադասում էր ընդհանրապես պատերազմներ չմղել, քան մղելով՝ պարտության վտանգի ենթարկվել։ Այդ ժամանակաշրջանում Մեծ Հայքը դարձավ խոշոր և ուժեղ պետություն, ծավալվելով մինչև Հայկական բարձրավանդակի գրեթե բոլոր ծայրամասերը։ Իսկ հարավային կողմում դեռ կային հայաբնակ երկրամասեր, որոնք դուրս էին մնացել պետության սահմաններից։ Եվ ահա, հավանորեն 60-ական թվականների սկզբներին, հայկական զորքը ներխուժում է դրանցից մեկը՝ Տմորիք և նրա հարևան վայրերը ու միացնում այդ հողերը Մեծ Հայքին (Strab., XI, 14, 5)։

Այդ ժամանակ Սելևկյան պետության գլուխ էր կանգնած արդեն Անտիոքոս Դ Էպիփանեսը (175—164 թթ.), որը վերջ էր տվել նախորդ իշխողի թուլամորթ քաղաքականությանը և բռնել տերության նախկին հզորության վերականգնման ուղին, արտաքնապես բարեկամական հարաբերություններ պահպանելով Հռոմի հետ։ Անտիոքոսը արշավեց Մեծ Հայքի վրա, ըստ երևույթին, օգտագործելով Տմորիքի միացումը որպես պատերազմի անմիջական առիթ, և պարտության մատնեց Արտաշեսի զորքերին[40]։ Գրավված հողերը ետ խլվեցին։ Սակայն 164 թվականին նա սպանվեց արշավի ժամանակ ու տարած հաղթությունների նշանակությունը գրեթե զերոյի հավասարվեց։

Անտիոքոս Էպիփանեսի մահվանից հետո Հայաստանը անմիջապես քայլեր է անում նախկին վիճակը վերականգնելու ուղղությամբ։ Արևելքում այդ ժամանակ գլուխ էր բարձրացրել նախկինում Բաբելոնի, ապա Մարաստանի սելևկյան կառավարիչ Տիմարքոսը։ Սա միավորում է Արևելքի՝ Սելևկյաններից դժգոհ տարրերը, և, ոգևորված Հռոմի բարոյական օժանդակությամբ, իրեն թագավոր հայտարարում։ Արտաշեսը դաշինք է կնքում Տիմարքոսի հետ և օգնում սրան նվաճելու Հյուսիսային Միջագետքի հողերի մի մասը մինչև Զեվգմա (Diod., XXX, 27[a])։ Հասկանալի է, որ ինքն էլ, օգտվելով առիթից, վերամիավորում է հարավային, Սելևկյաններից գրաված ու Անտիոքոս Դ-ի հետ վերցրած հողերը։

Սրանից հետո Արտաշեսի մասին այլևս տեղեկություններ չունենք։ Ենթադրվում է, որ նա մահացել է 160 թվականին[41]։

---

[39] Diod., XXXI, 22։ Տես նաև Polyb., XXXI, 17, 5
[40] Diod., XXXI, 17[a], App., Syr., 45 և 66։
[41] Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 124։

Արտաշեսը, ըստ Խորենացու մոտ պահպանված ավանդության, վեց որդի է ունեցել՝ Արտավազդ, Վրույր, Մաժան, Զարեհ, Տիրան, Տիգրան, որոնցից երեքը՝ Արտավազդը, Տիրանը և Տիգրանը հաջորդաբար թագավորել են հորից հետո։ Վաղուց արդեն նշված է, որ այս տեղեկությունները մոտ են պատմական իրականությանը[42]։ Միանգամայն հավանական է, որ Արտաշեսի որդիներից մեկը անվանվեր Զարեհ, քանի որ Արտաշեսի հայրը հենց այդ անունն էր կրում[43]։ Ինչ վերաբերում է գահի վրա Արտաշեսին հաջորդած նրա որդիներին, ապա այլ աղբյուրներում հիշատակվում է Արտավազդը որպես մ. թ. ա. II դարի վերջերի հայոց թագավոր (Just., XXXIII, 3, 1) և Տիրանը՝ Տիգրան անվով, որպես Տիգրան Բ-ի հայր (App., Syr., 48)։ Իսկ Խորենացու Տիգրանը հենց նույն ինքը Տիգրան Բ-ն է, Արտաշեսի թոռը, որ ավանդության մեջ դարձել է նրա որդին[44]։

Տարակուսելի է միայն Արտավազդ-Տի(գ)բանի հաջորդականության խնդիրը։ Ավելի հավանական է, որ Արտաշեսին հաջորդել է Տիգրանը, ապագա Տիրան Բ-ի հայրը, իսկ նրանից հետո գահակալել է Արտավազդը, թագավորելով մինչև մ. թ. ա. 95 թ., այսինքն մինչև Տիգրան Բ-ի գահակալումը։ (Just., LXII, 2, 6)։

Այս երկու իշխողների ժամանակաշրջանը, ըստ երևույթին, հարուստ չի եղել արտաքին իրադարձություններով և պատերազմներով, որի մասին բացի աղբյուրների լռությունից, վկայում է նաև նրանց իշխանության երկար տևողությունը։ Միևնույն ժամանակ սրանք իշխել են միջազգային իրավիճակի արմատական փոփոխության, Առաջավոր Ասիայի քաղաքական ուժերի նոր տեղաբաշխման շրջանում։

160-ական թվականների սկզբին պարթևները պատերազմ սկսեցին Տիմարքոսի կողմից թագավորություն հայտարարված Մարաստանի դեմ և մի քանի տարի տևող պայքարից հետո նվաճեցին այն[45]։ Պարթև Միհրդատ Ա Մեծին (171—137 թթ.) հաջողվել էր ամրապնդել արևելյան սահմանները[46] և 145 թ. նա սկսեց իր առաջխաղացումը դեպի արևմուտք։ Առավ Տիգրիսյան Սելևկիան, նվաճեց Բաբելոնիան, գրավեց Շոշը։ Սելևկյան Դեմետրիոս Բ Նիկատորը (145—140 թթ.) փորձեց վերականգնել իր տերության սահմանները, բայց մասնակի հաջողություններից հետո պարտություն կրեց և գերի ընկավ պարթևներին։ Սրա եղբայր Անտիոքոս Է Սիդետեսը (138—129 թթ.) 130 թ. արշավեց պարթևների վրա, բայց նորից անհաջող։ Երեք ճակատամարտերում հաղթանակ տանելուց հետո, չորրորդում նրա գորքերը ջախջախվեցին և ինքը սպանվեց։ Սրանով հիմնականում Սելևկյանների դիմադրությունը կոտրված էր։ Պարթև Միհրդատ Բ (մ. թ. ա. 123—87 թթ.) ևս մի քանի հաջող արշավանքներ կատարեց դեպի արևմուտք և հասցրեց պարթևների տերության սահմանագիծը մինչև Եփրատ[47]։ Համաձայն Հուստինոսի հաղորդման, Միհրդատ Բ-ը

---

42 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 135։

43 Նույն տեղում, էջ 131։

44 Նույն տեղում, էջ 135։

45 N. Debevoise, A political History of Parthia, Chicago, 1938, էջ 21։

46 P. J. Junge, Parthia, PWK RE, 36. Halbband, 1949, էջ 1962—2029։

47 N. Debevoise, հիշ. աշխ., էջ 226 և հետ. P. J. Junge, հիշ. աշխ., նույն տեղում։

պատերազմել է նաև հայոց թագավոր Արտավազդի դեմ և պատանդ վերցրել թագաժառանգ Տիգրանին (XXXIII, 3, 1. LXII, 2, 6)։

Սրանով ավարտվում է պարթևների աշխարհակալական ձգտումների իրականացման առաջին ալիքը։ Այն կանգ առավ դեմ առնելով մի այլ երկրի ստրկատիրական Հայաստանի հզորացմանը և աշխարհակալական ձգտումներին, որոնց իրականացնողը եղավ Տիգրան Բ-ը։

Г. Х. Саркисян

АРМЕНИЯ ВО II ВЕКЕ ДО Н. Э.

(Опыт систематического привлечения данных «Истории Армении» Мовсеса Хоренаци для освещения истории эллинистического периода)

Резюме

В статье излагается история Армении II века до н. э., преимущественно первой его половины, значительно более богатой событиями, знаменовавшими образование и укрепление государства Великая Армения.

Особенностью данного изложения является систематическое использование в нем материалов «Истории Армении» Мовсеса Хоренаци, привлекавшихся ранее для освещения этой эпохи лишь эпизодически. «История Армении», произведение, хотя и отстоящее от излагаемых событий не менее чем на семьсот лет, сохранила, однако, античную историческую традицию, а также народные предания, восходящие к эллинистическому периоду.

В отборе и использовании материалов «Истории Армении» Мовсеса Хоренаци автор статьи опирается на определенную методику (разработанную в других трудах автора), которая включает перекрестную проверку и подтверждение данных Хоренаци сведениями греко-римских повествовательных как и местных документальных источников, а также учитывает внутренние особенности «Истории Армении» и творческие принципы ее автора.